

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

(Տես յէջ 170)

80. Աղաւնարօտ. Աղվանարօտ. Աղուենարօտ. Աղաւնեկ. Աղաւնին.
51. Աղվնու ծիրտ.

Այսքան իրարու մօտ և հեռի անուանց՝ գոնէ առաջինին և վերջինին մէջ
տարբերութիւն պիտի ըլլայ, այսինքն տարբեր բոյսք պիտի ըլլան. բայց դժար է
որպաշտն. նոյն խակ Եւրոպացիք կու չփոթեն ասանց դիմաց դրուած արարացի ա-
նունները, և կ'ըսեն, թէ երկու տեսակը են. նոյնպէս կ'ըսէ մեր Ամասիացին
ալ, բայց շրջողիր, այլ նոյնացնէ կամ նոյնանիշ համարի երկու անուններն ալ.
ինչպէս հին թժշկարանն ալ կ'ըսէ. և Աղվանարօտ Աղվանարօտիրան. իսկ Ամիրա-
երկու անուններն ալ արարերէն երկու տարբեր անսւանց տակ հաւասար զրէ-
որց մէկն բռն Աղաւնարօտ նշանակէ, և է «Ի՞այ բլ-հանամ, (թաշէ ը),
» որ է կօկարձին օրի. ինքն խոտ մի է որ ի ծրի տեղեր կու բուսնի, և տերեւն
» սպիտակ և երկան կու լինի թիզ մի. և ազաւիքն այսոր ի տակն կու օթին»:
Եւրոպացիք այս բուսց սեփականած են լ. Verbeau. Փ. Vervené. Ռ. Ջե-
լենցիան կոշուածը: — Խոկ մրւա արարերէն անունն է Համամա, Խամաց, զոր
նոյնպէս զրէ Ամիրա. և կ'ըսէ, «Համամայ. ինքն ծառն է փոքր, և կուզներ
» (ողկոյզներ) ունի. և ծաղիկ ունի սակեգուն, և հոտն անոշ, և ինքն երեք
» ցեղ է. և լաւն ոյն է որ սոկուն գունովն լինի և թաժա և շոր... Ասեր է
» զրոց շինողն, թէ Համաման երկու ցեղ է, Ամամուն և Ամունեան, և պարս-
» կերէն Մահուրդա կ'ասն. մէկ ցեղն յայտնի է (այն որ) ի Շիրազ Մահուրդ.
և և մէկ ցեղն այլ կայ որ ի Փարսիկան (Ջարխսոտ) կու նմանի. և փայտն
» դեղին է՝ որ ի Կարմրութիւն կու քշոէ, և տերեւն կանաչ է և մանոր, և
» ծաղիկն դեղին և փոքր է, և երկացնութիւնն մէկ վաճիպ է, և լաւ... ի
» Հայոց գայ և անուշակոտ լինի. և լսեցաք որ հայերէն Աղվենարօտ ասենու: Ռւ-
բիշ թժշկարանք լաւ տեսակն յԱնտիք և ի Մէրտին կ'ըլլայ կ'ըսեն. մէկն ալ,
«Համամայ» կարմիր հունտ է, ի Մարտին լինի. աղէկն առողջ պիտի»: Այս
Համամայն ըստ Եւրոպէացոց է Աղմրտովիաթայ Ամամուն կոշածն. Լ. Ատոտա,
Փ. Ատոտ. Ռ. Ամօմէ, և յատկապէս Առ. Racemotum (Շատովկոյզ) ըսուածն.
բայց ոմանք կարծեն Երիբովի վարդ ըսուածն, ոմանք տարբեր բոյս մի: — Եէ հրի-
մանեանն Աղաւնիշ կ'անուանէ առաջին տեսակը (Verbeau), և 1¹/2 առնաշափ ցոշ
զուն է կ'ըսէ, անկիւնաւոր, երկացնկեկ ձագարաձեւ կապօյտ կամ. ճերմակ
ծաղկներով, արմատն մատնաշափ հաստ մանրիկ թելերով:

Աղաւնոյ ծիրտն ալ արաբերէն խորոց էլ-Համեամ կոչուի, կամ Խարլ ալ-Համեամ, ըստ Ամիրտ. որ յիշ ուրիշ անունն ալ Ճազզի Ճանդռում կամ Ճուզ Ճօնտում, ըստ Պէթարայ. բայց ասոր բացատրածն հողային նիւթ մ'է և ոչ բայց. ասկայն փռանկ թարգմանիչն բռսեղէն համարի, Lichens ըսուածներուն ցեղէն:

Այսափ ըսածներէս ետեւ՝ ինձ կ'երեւի Աղաւնարուտ անունը՝ սեփականներ իրաց ըլ-Համամի. Աղաւնոյ ծիրտն՝ ինչ որ դիմացը յիշեցինք քիչ մի վերը. իսկ Համամայն կողմի է կամ նոյնպէս, կամ Դիմի Մ'ոչչի, ինչպէս տեղ մի կոչուածէ: — Տես և ի կարգին զշամամա:

Աղաւնոյ ծիրտն՝ ուրիշ թժշկական բառդիլք՝ զրէ Lichen, Քարի բու կամ Ժանդ, և յարմար է:


52. Աղբաղբուկ.

Տես ինչ որ ըսինք Աղարադրուկ բառին համար. Բժշկարանք ումունք այս անունն իու տան Արաբաց ջոց բառին, որ է ըստ բոււարանից՝ Valeriana, կամ լաւ եւս Valerianella. Ի՞ Եղանգրանու. Ամիրտովվաթ այսպէս կու ստորագրէ զմու. «Որ» է Վայրի Սնապու. մանր տակեր է անուշակոտ. և բաւն այն է որ նոր լինի և «հոտն սուր լինի:... իսկն (Պէթար) ասէ, թէ ինքն Վայրի Սնապուն է, և տերեւն » նման է քարաւախին տերեւին, և այլ մեծ. և որձան կանգուն մի է և այլ եր. » կան է և կոկ լինի, և դոյնն նման է Ֆիրի? և այն որ խիստ հասու լինի և » հաստութիւնն քան ի ճկըթի մի շափ է, և տակն անուշակոս է», և այլն: Գրեթէ ճիշտ թարգմանութիւն է Պէթարի, բայց սա կու յիշ ալ որ այս բոյս դտուի յատկապէս Պօնտոսի ծովեղերքը:

53. Աղբերաց արիւն.

Այս անուամբ երկու ասպրեր նիւթ կ'իմացուի հայերէն. մէկն ծաղիկ, մէկ այլն հիւթ կամ խէժ մի, որոյ համար զրէ Ամիրտ. թէ արաբերէն «Ճամ ըլ-ախիաց» կոշէն (Ճիմ էլ ախուշէն)... ինքն կարմիր է և ի Յօմանին (Յմէն) Կղզին լինի, ո անտի կու բերեն. և երկու ցեղ է. լաւն կարմիր է և յատակ»: Ուրիշ տեղ ալ կ'ըսէ. և կարմիր է գէտ Զնառուֆրն, և յաշից գեղերն մտնու»: — Ուրիշ թժշկարան և Գարիենոսի բառք գրեն. «Դարաշխէն (Տարիշգան կամ Տարիշան) և Խոնիատաշան՝ Աղբրաց արուն» յետին բառն պարսկերէն է. Հայաշան Խոնն սիազան, և նշանակէ փիշապի արխն, ինչպէս և լ. Sanguis Draconis, և Փ. Sang-Dragon. Ի՞ Կրանի պաւել. Հասարակաց ծանօթ է այս խէժն կամ հիւթն, որոյ բերողն ալ Արմաւենեաց ցեղին վերաբերեալ եղեգանման ծառ մ'է. Calamus draco. — Ասար թժիկ կ'աւելցընէ. «Աղբէր արուն՝ լաղինն Անեկիս տրաքօխն և Փառքենիում»: Ետքինս Parthenium ուրիշ տեսակ բոյս է: — Ստ. Ռոշքեան ալ կ'ըսէ. «Փուշ է սպիտակ, մեծ իրրեւ զփորք ծառ, զծաղիկ վարդի և (նման). որոյ արմատն ազնիւ իւղ լինի. Aspalathus (ի) բառս Գարիենոսի և. այս պէս նշանակեն և թժշկարանք ումակը վերայիշեալ Տարիշան և Խոնն սիազան բառ դիմաց: — Տես Դարիշան:

Մեր հայկական Աղբերաց արիւնն հիմայ ալ ծանօթ՝ ծաղիկ մ'է. և ծաղկանց թագաւոր կամ թագուհի կը ընանք ըսել, գոնէ մեր երկիրն մէջ. մեղի պանծալի,



տարաց նախանձելի, և ամենուն զմայելի իր գունոյն համար, որ ամեն տեսող և քննող եւրոպացի զարմացուցեր է; Անոնն ալ գեղեցիկ, այլ և խորհրդաւոր, և գեր վիճի տակ, արդեօք եղացը արին նշանակէ, զին և մոռացեալ աւանդութեամբ մի, լսու որում և թուրքք անուանեն Գարտուազ գանդ և յաւելուածով Եկոսի գարտուազ գանդ, ինչպէս և Ալաջուորեցին կ'ըսէ հայերէն՝ Եօրե աղօր արին, թէ Ալզիրներու արին. որովհետեւ ընդհանրապէս իբրանց քարքարուս կողմեր՝ աղքիրներու եզերք կու գտուի: Անզիրացի ազնուական (1) մի՛ որ իբրեւ 50 տարի առաջ բարձր Հայոց կողմերը շրջեր և ծաղկաբաղ ըրեր էր, որեւ զրախտին թե՛ թե՛ մացորդ (Ամոյշ՝ ըստ մերոց բանասիրաց) ման, կ'ըսէ, ինչուան մեր օրե՛ ո րու ալ, գեղեցկացոյն ծաղկանց կերպարանաց վրայ՝ զդր հաւաքեցի այն լեռ նարըլըն վրայ՝ ուսկից երեք գետք կու րզենեն և հեաւուր ծովեր կ'երթան: Թէ ո պէտ անոնց մէկն ուսումնական լատին անուն ալ ունի, բայց և ոչ մէկ բայց մի անոր նման երեւցեր է յԵւրոպա, և որչափ ալ հնարք ու չանք ըլլայ՝ անհարելի է հօն հասցնել: Այս ամենագեղեցիկ բերքն է Եօրեն եղարաց արինն (Ալզիրաց արինն), զօր Եւրոպացիք կոչեր են Ravanea, կամ Phelippaea (2) ո սուսինա, որ մակարոյ (parasite) մէ՛ ի վերայ օյլնդրի: Անէ գեղեցիկ ծաղիկ կարելի չէ երեւակայել. ձեւով նման է շոշանի (լաւ եւու վարդի) 9 կամ 10 մատու նաշափ երկայն ցօղունով, որ հանդերձ ծաղկամբն և ամեն մասամբք՝ բառու բահացի թաւկի կու նմանի. կու գտնափ կարնոյ քաղաքի իբրանց կողմերը, շատ ո հեղ Արեւելեան Morina կոչուածին հետ, որ նշանաւոր տեսակ մի է Ակբանի, ո ժաղկըներն ցօղունին վերէն ի վար, տեսովդ և հոտով նման Ճանկիկի (Chevreuil): — Մեր Հարց մէկն ալ սոսորագրէ Ալզիրաց արինը, « Ամենեւերն անտերեւ, ցօղունն խողովակածեւ երկայն կոյր և մութ կարմիր. ի գագաթանն է բաժակն, ամենագենդանի գեղեցիկ կարմիր. բաժակն հինգ տերեւ բաժանեալ, և ի միջին երկու սեաւ տերեւք՝ լիզուածեւք փակեալք (կը- պած) կարմիր տերեւոցն. Նոյնպէս և երկու ծիւլք, որոց ծայրն կայ ծաղիկ ո մանր գեղին գունով (սերմական մասունքն), զրաժակն պատէ մայկ երկայն բարակ տերեւանման. արմատն նմանի փոքր ինչ Զընծաղիկի, բայց առ անի և մազմզուկու: Մէկ բառով կարմիր գցնը նշանակէ Ալզածորեցին. « Արտիմզ Խօթնաղոր արին»: — Յեւրոպացոց նախ կուռնըֆոր տեսեր և սոսորագրեր է. անոր համար իր անուամբ ալ կոչուի Anoplantus Tourneforti (3), առաջին բառն յանարենէ կու նշանակէ բուսոյն մերկ կամ երկ կ'ըլլավը տերեւ շունենալով, այլ թեփի պէտ բաներ: Իրմէ մէկ ու կէ գար վերջը Պուհուէ գերմանացին (Buhse) նոյն կողմերը ուր Դուռնըֆոր տեսեր էր Ալզիրաց արինը (Ճաղրուի կամ Ճանկոյ գետահովուն) որոնելով գտու այն « Հաւուագիւս զարմանալի բոսու», ինչպէս կ'ըսէ, (hochst seltene merkwürdige Pflanze). և կու նկարագրէ վերցպերոց պէտս, և մէկ ծաղիկ միայն ունենալն, մէջին երկու սեւ մաշկներն ալ կու նմանեցնէ ծաղիկն վրայ նսասած միջատներու: — Մաղկին թերթերն կամ փերթերն հինգ ըսուեցան, թէ և + Արուանձտեան՝ երեք կ'ըսէ (Մանանայ, 441), որիշներն աւելի շատ և բարդ կ'ըսեն. գուցէ զանազան տեսակք ալ ըլլան: ինչուան

1. Lord Curzon Robert.

2. Յանուար Phelipeaux de Pontchartrain ծովապեալ ԺԴ Լուկիկի:

3. Կ'ըսուք եւս ուրիշ գետահովուն մի անդամք. Anoplantus Bibersteinij.

հրմաց մեզի ծանօթ դասնուած տեղուակն են կարին, Բասկն, Ալավերտ, Տարօն (Մուշ), Վարագ լեռ, Լոռի, Կողբ (Ուուրմալի), Վարաժնունիք (Տարաշչակ): —

Աղբերաց արինն կու վերաբերի ըստ բուսաբանից Օրօնածութեա կոշուած ցեղի ծաղկանց, որ են մակարոյագ, այսինքն ուրիշ մեծ բաւոց կամ ծառոց կոճղերու վրայ բուսազգք: — Արշափ որ անոնքոր կամ գժար մօտենալու է Աղբերաց արեան տեղին, այնպան կերպով մի կ'աւելնց իր յարդն կամ գեղեցկութիւնն, որ եթէ օտարազգեաց աշքը յափշտակեց, մերազգեաց աշքն ու միուքն ալ որսացեր է. ինչպէս այլեւայլ անգամ յիշուած մեր ռամփիկ սիրաբան բանաստեղծից երգերն վկայեն.

« Այ իմ Աղբերաց արուն, և կոմ « Այ իմ աղբերաց արին,
Որ բուսար ի մէջ քարերուն, Ապառաժ քարըն կենաս գուն.
Աղուդի ի նարկիզ նըման, Աշերդ ունայի? նըման.
Մէկն ի քուն ու մէկըն զարթունն»: Ոչ ի քուն ես եւ ոչ արթուն»:
Եթէ Ոլիդիս կամ Վերգիլիս տեսած ըլլային զայս, արգեօք ասկէ աւելի պարզ
և զեղեցիկ կարենային ըսել. գուցէ նոր այլակերպութիւն մ'ալ հնարէին իրենց
Նարգիսից և Դափինեաց նման:

Այսպիսի յիշատակք անցուշտ ներելի կ'ընեն, եթէ քիչ մ'ալ հեռանամք մեր
ոճէն, և յիշելի այս տեղ ուրիշ շքնաղ ծաղիկ մ'ալ, որոյ ոչ անունը գիտենք և
ոչ տեսակը: Վերցիշեալ անդղիացի ազնուականն յետ նկարագրելու զԱղբերաց
արինն, կ'ըսէ. « Այս տեղ ուրիշ զեղեցիկ ծաղիկ մ'այլ կայ, որ գեղ ստորա-
ո գրուած չէ. ժայռերու մէջ կու բուսնի, և ձիգ ստեղիլին նման արմառ ունի,
ո երկու սանալափ կամ տեղի երկայն. տերեւներն երկայն թանձր թեկեր են,
ո որ ցած թուփ մի կու ճեւացընեն՝ կոչս խոսերու խուրձի նման. ծաղկըներն
ո տերեւներու տակն են, 12 կամ 20 հատ, մեծամեծ երմակ..?... կեռասից (1)
ո նման, ողկուզաձեւ կամ փընջաձեւ կախուած կոթի վրայ, 8 կամ 10 մատ-
ս նասափ երկայն, և պարզապէս գունաւոր ֆամիլուսներ են, որոց մէջ են հոն-
ո տերն ո: — Կ'արժէ դսրձեալ յիշել այս տեղ պանչել անանուն բօյս մ'ալ, մա-
նաւանդ որ մասամբ Աղբերաց արեան նմանութիւն ունի. Ճեմելի խոալացի տեղա-
զիրն անցեալ գարու սկիզբները»: Թալնայ (Արագած լեռան) մօտերը, տեսայ,
» կ'ըսէ, գեղեցիկ և շքնաղ ծաղիկ մի, որուն համար ամէն խոալացի իշխան շատ
ո թանկ գին կու տար, եթէ կարենար իր պարտիզին մէջ բուսցընել. ցօդունն կէս
ո թիզ միայն բարձր է, ծայրը երեք ներմակ ծաղիկը կան գարգմանակի ձեւով»
» շիտակ կեցած, երեք հատ ալ մանիշակադոյն եռանկիւնաձեւ վար կախուած,
ո մէշերնին ալ փոքրիկ սեւ վարդակերպ մի կայ. երեք ուրիշ ալ աւելի բացգյոնով
ո առջններուն վրայ պըլլաւած ո: Այս նկարագիրս կու նորոգէ ի միտու մեր գու-
ո ասնին երգած նարկիզ աշքերը, « Մէկն ի քուն ու մէկն այլ արթուն»: —
Կնքենք խօսերնին վակնէր գերմանացի բնագէտ բուսաբանին ըստածով, որ ասկէ
իրը 50 տարի առաջ Այրարատեան աշխարհին այլեւայլ կողմերը քննելով, Մեծ
Մասիսու ցած կողմերը տեսեր է և մեծ և զարմանագեղ վրացի վայրի Հուշան մի
» կամ Հերիկ (Iris Iberica). որ յետ Աղբերաց արեան Հայաստանի բարձրաւան-
ո գակաց գեղազէշ գերազից բուսացն (2), թերեւս գեղեցիկադոյնն է քան զամենայն

1. Like large white-heart cherries.

2. Die prächtigste Zierpflanze des Armenischen Hochlandes,

» ծունօթ վայրի շուշանո», Ուրիշ տեղ ալ կ'անուանէ «Հայտառանի գեղեցկագոյն ալպեան (լեռնային) բոյս», պանչլազպայծառ ծիրանեղոյն» (1): Մեր բժշկագետին (Ամիրտ.) անծանօթ թուր այս հայրենի բոյսո. ի կարգի բանիցն չի յիշեր. իսկ ի շարակն (ինչպէս կ'անուանէ զցանկ բացատրեալ և շատարեալ բառիցն), միայն զանունն յիշէ, «Աղրբաց արիւն, որ է.....» և չի գաներ նոյնանիշ անուն օտար: — Բժշկութեան կամ գեղոց մէջ Աղրերաց արեան գործածուիլը յիշէ մեր մեծագոյն բժշկապետն Միփթար Հերացի:

34. Աղեկատիկ.

Նոր ատեն հնարդած կամ յարմարցուցած բառ կ'երեւի, L. *Sphondylium* կամ *Branca ursina* կղուսած բուսոյ համար: որ Փ. կոչուի Երես, կամ Գերմանական Ականթ, *Acanthe d'Allemagne*. ԲԻ Մեծեայն լապա. Մեր Ամասխացին ալ Արաբացիւն նոյն յոյն և լստին բառով յիշէ, քիչ մ'ալ խանդարելով. Առու « դունտիլուն. ինքն խոտով է, որ տերեւն նման է Զինարին (Ասոիի) տերեւին, » և յերկայնութիւնն մէկ կանգուն լինի. գագաթն նման է Սամիթի գագաթին, » և ապիտակ ծաղիկ կ'ունենայ, և տակն այլ ապիտակ կու լինի, ի բողկ կու նմանի. և ինքն ի բաց տեղեր կու բուսնի»:

35. Աղթապաստ.

Ամիրտովաթայ գըրքէն է. հայկական թէ ստար, շխտակ թէ ծռած. ատուգոթեան կարոտի. իր բացատրածն այս է. « ինքն ծառմն է որ ի Տանձենի կու նմանի, բայց շատ փեր ունի, և պտուղն ի Մրտենու պտուղ կու նմանի. և թէ իր պտղէն ուտեն՝ օգտէ հին փորացաւոթեան և լուծման... և թէ զտակն ապեղանի առնես և զնես ի վրայ ճռահամբին՝ օգտէ »:

36. * Աղթեկ.

Լատինարէն *Althea* բառն է տառադարձեալ, հայերէնն է Տուղու:

37. Աղին.

Գալիկենոսի բառից կարգին դրուած է զուգանիշ Կնիդոսի, որ է *Cnidium*. Փ. Cusson.

Աղինն — տ. Եղինն.

38. Աղմէկտակ. Աղնտակ. Աղնկտան. Աղնկուտատ. Աղջկտակ. Աղջկուտակ.

Այսպէս զանազան կերպով գրուած, որ կըրնար վերոյգրեալ Աղին բուսոյ տակն

1. Die schöste Alpenblume Armeniens *Anoplantus Bibersteinij*, von prächtiger Purpurfarbe. Երդողէս կ'անուանէ և Տէֆոնդէն փուսնկ բուսաբանն, Համացեղ *Lathrea* բուսոյ հետ գուգով, *Lathrea Phelipaea*, d'un pourpre violet.

կարծուիլ. բայց բժշկական բառքիրք կ'իմացընեն հասարակօրէն ժանօթ կամ ընտանի, «Տանու Աղճկուտատո», ըստ Մի. Ներացւոյ, որ Մոլոյն է (Լ. Մալա, Փ. Մասու), որ ուրիշ շատ առմագական կամ գաւառական համանիշ անուններ ալ ունի, որք պիտի յիշուին իրենց այրբենական կարգին:

69. Աղուաշբանկ կամ Աղուէշբանկ.

Ոմանք նոյն համարին զամ և զբանգ, և ոմանք տարբեր: Դանօթ է բոյս Լ. Կյոցչատս անուամբ. Փ. Խոսկուատո. պարսկերէն Պէնի կ'ըսուի և անկէ արարացեալ Պէնձ, այսպէս գրուի Ամիրտ. բառագրոց մէջ, բայց բացատրութիւնն թուրքերէն գրուած է, և միայն բժշկական դեղն և օգուտն, իստ զանազան բժշկաց յորոց հաւաքեր է Պէնձ:

Թար, որ Պէնձ անուամբ կու ստորագրէ՝ բայց կ'իմացընէ ալ՝ որ արարերէն Ամիրտ. բառագրոց մէջ, բայց բացատրութիւնն ըւ-յարսի (արարի) Պանձն է ու:

Իսկ ինքն Պանձ անուամբ յիշէ և գրէ. և Պանձ, որ է Պարուցի՝ Պանձ (Բանգի հունտ), Պարու սիկն Պանձ ասէ, որ է Աղու վէշբանէն հայերէն բառով. և ինքն երեք ցեղ է. սպիտակ է, և սեւ է և կարմիր է. լաւ այն է՝ որ սպիտակ լինի»: — Դարձեալ իրրեւ տարբեր բայս՝ գրէ. և Պանձ, ինքն խոսէ, և հունտն ի պտկըներու մէջն է. երկու ազգ է, սպիտակ և սեւ, աղուկն սպիտակ հունտն է ու:

Վաստակոց գրոց մէջ յիշուի իրրեւ գեղ՝ Աղջպէնկ և Աղջրանկ զրութեամբ (գլ. Խթ. ՑԼ.) զոր օրինակ, «Օձահարի և կորահարի խայթած տեղն՝ օծ... Աղջբանկի տերեւին յրովն»: Եղյն լուրն գործածել խրատէ նաեւ սէզը և նման խոնաւ բոյսերը ցամեցընելու համար: Աղջայինք և երոպացի ճանապարհորդք յիշեն այս բայս Կարնոյ, Թորթումի, Շիրակայ, Բասենոյ, Լոռուայ, Երեւանայ և այլ կողմեր:



Աղուաշբանկ